ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ ԿՎ/05/2022 ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «24» մայիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով ՀՀ վարչական դատարանի դատավոր Գրիգոր Սամվելի Առաքելյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում չներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 18-ի N ՎԻՎ/17/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի հիմքով հարուցված 2022 թվականի մայիսի 13-ի N ԿՎ/05/2022 կարգապահական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը.

1.1 Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել ՀՀ վարչական դատարանի դատավոր Գրիգոր Սամվելի Առաքելյանի կողմից 2021 թվականի մայիսի 27-ին «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) «Բ.1. Անշարժ գույքը» բաժնում

233

անշարժ գույքի միավորների (Գրիգոր Սամվելի Առաքելյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 3 միավոր անշարժ գույք՝ հողամասեր Տավուշի մարզ, Գետահովիտ համայնք հասցեում՝ անշարժ գույքի հետևյալ հաշվառման համարներով՝

՝ վերաբերյալ տվյալ չհայտարարագրելը: Նշված առերևույթ խախտման առնչությամբ 2022 թվականի մայիսի 18-ին Հանձնաժողովի որոշմամբ հարուցել է թիվ N ՎԻՎ/17/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2 2022 թվականի մայիսի 18-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ17/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.3 Գրիգոր Առաքելյանի կողմից 2022 թվականի մայիսի 25-ին Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային հասցեին են ներկայացվել վերոնշյալ թվով երեք հողամասերի՝ ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված հողահատկացման հիմքերը՝ Տավուշի մարզի Գետահովիտ համայնքի ղեկավարի կողմից 11.01.2001 թվականի որոշմամբ հաստատված:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 24-ին, Գրիգոր Առաքելյանի մասնակցությամբ իրականացվել է գործի քննություն:

2. <u>Վարույթի մասնակցի բացատրությունը</u>.

Գրիգոր Առաքելյանը Հանձնաժողովին 17.05.2022 թվականին ներկայացրած գրավոր բացատրությամբ, մասնավորապես, հայտնել է, որ Հայտարարագրում հայտնաբերված, հայտարարագրման ենթակա թվով երեք հողամասերի՝

հաշվառման համարանիշներով անշարժ գույքի միավորների մասին վերջինս տեղեկացել է միայն Հանձնաժողովի կողմից ուղարկված գրության բովանդակությանը ծանոթանալուց հետո՝ իր ծնողներից, քանի որ նշված անշարժ գույքերը սեփականաշնորհվել են 1991 թվականին, այսինքն՝ այն ժամանակ, երբ ինքը եղել է ընդամենը 2 տարեկան, որի վերաբերյալ պետական գրանցում է կատարվել 2001 թվականին, երբ ինքը դեռևս եղել է անչափահաս: Նշվածով պայմանավորված՝ գտել է, որ իր մեղքը բացակայում է կատարված արարքում:

234

3. Որոշումն ընդունելու իրավական և փաստական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.

3.1 Գրիգոր Առաքելյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, իսկ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը, համասեփականատիրոջ բաժինը, նրա անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը:

3.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

3.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

3.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա**, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ

235

քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

3.7 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման* նույն հոդվածի 1-ին կետով սահամված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման*** *դեպքի* կամ **կազմի *բացակայությունը***:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված էհամարում, որ *իրավախախտան կազմը բացակայում* է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, ***մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ)*** այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Նույն օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում, արդյոք, ***տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության*** (...):

Մատնանշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ վարչական պատասխանատվության ոլորտում գործում են «ըստ մեղքի պատասխանատվության« կարևորագույն սկզբունքը:

Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին:

Նմանատիպ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշմամբ՝ նշելով, որ վարչական

236

պատասխանատվության սկզբունքներից է « պատասխանատվությունը մեղքի համար« սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ Գրիգոր Առաքելյանը անշարժ գույքերի՝ հաշվառման համարներով հողամասերի, սեփականատեր է դարձել սեփականաշնորհման արդյունքում, վերջինիս իրավունքը գրանցվել է և անշարժ գույքերի իրավունքի պետական գրանցման վկայականներ են տրվել 28.12.2001 թվականին, այսինքն այն ժամանակ, երբ Գրիգոր Առաքելյանը եղել է անչափահաս, հետևաբար այդ հանգամանքի մասին վերջինիս չիմանալու պատճառաբանությունները գործի քննությամբ համարվեցին հիմնավորված:

Այսպես, օրենքի ուժով գրանցված իրավունքի և վարչական պատասխանատվության հիմքում այն դրվելու հարցերին է անդրադարձել նաև ՀՀ վարչական դատարանը թիվ **ՎԴ/8774/05/18 վարչական գործով գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով՝ մասնավորապես արձանագրելով հետևյալը. « (.....)** մինչդեռ Դատարանը փաստում է, որ գույքի նկատմամբ գրանցված իրավունքի մասին տեղեկացված լինելու կանխավարկածի նպատակը համապատասխան շահագրգիռ անձի իրավունքների երաշխավորումն է՝ գրանցման պահից դրանց իրավական ուժի շնորհման միջոցով, ինչը սակայն չի կարող դրվել վարչական իրավախախտման հաստատման հիմքում, այսինքն՝ օրենքի ուժով գրանցված իրավունքի մասին տեղեկացված լինելը չի կարող ինքնին դիտվել նման իրավունքի մասին ***փաստացի տեղեկացվածություն, քանի որ անձը վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն մեղքի առկայության դեպքում,*** իսկ մեղքը դա մեղավոր գործողություն կամ անգործություն է, այդ թվում նաև՝ անզգուշության ձևով, այն է՝ անձը պետք է կանխատեսի վնասակար հետևանքները կամ պարտավոր լինի և կարող լինի կանխատեսել դրանք:

238

Դատարանն արձանագրում է, որ վնասակար հետևանքների կանխատեսում անձը չի կարող անել, եթե փաստացի տեղյակ չէ որևէ իրավիճակի մասին՝ անկախ օրենքի ուժով տեղեկացված լինելուց»:

Սույն գործով հայտարարագրման ենթակա տվյալները՝ համատեղ սեփականության իրավունքով պատկանող 3 միավոր անշարժ գույքի սեփականության իրավունքը գրանցվել են 28.12.2001 թվականից, երբ Գրիգոր Սամվելի Առաքելյանը եղել է անչափահաս (ծննդյան ամսաթիվը՝ 18.03.1989թ.):

Վերոնշյալով պայմանավորված՝ տվյալ դեպքում հաստատվում է, որ թեև Գրիգոր Սամվելի Առաքելյանը իր հայտարարագրում չի ներառել իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի վերաբերյալ տվյալները, սակայն այդ արարքում բացակայում է նրա մեղքը (անզգուշությունը), քանի որ Գրիգոր Սամվելի Առաքելյանը, փաստացի տեղեկացված չլինելով դրանց մասին, չէր կարող ու պարտավոր չէր կանխատեսել այդպիսի գույքերի՝ իր անվամբ գրանցված լինելու հանգամանքը, ուստի նրա արարքում զանցակազմի պարտադիր տարր հանդիսացող մեղքը չի կարող համարվել հաստատված, ինչը բացառում է վարչական իրավախախտման առկայությունը, և, ըստ այդմ էլ, վարչական տույժի նշանակման իրավական հնարավորությունը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է ներկայացնել գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ:

Սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորը պարտավոր է պահպանել սույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները: **Վարքագծի կանոնները չպահպանելը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության**:

Սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ վարույթ հարուցած մարմինը կարճում է կարգապահական վարույթը, եթե՝ ***առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.***

238

Ելնելով վերոնշյալից՝ Հանձնաժողովը հաստատված է համարում, որ ՀՀ վարչական դատարանի դատավոր Գրիգոր Սամվելի Առաքելյանի նկատմամբ 2022 թվականի մայիսի 18-ին հարուցված թիվ N ԿՎ/05/2022 կարգապահական վարույթում առկա չէ վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 25-րդ հոդվածի 6.1-րդ մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ վարչական դատարանի դատավոր Գրիգոր Սամվելի Առաքելյանի նկատմամբ 2022 թվականի մայիսի 18-ի հարուցված թիվ N ԿՎ/05/2022 կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի բացակայությամբ:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Գրիգոր Առաքելյանին, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով և ՀՀ արդարադատության նախարարին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

239